ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԼՕ-2020/74

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արա Կարապետյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Արա Կարապետյան» Ա/Ձ-ի և վերջինիս ներկայացուցիչ՝ Ա. Զարաելյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3727-2020 գրությամբ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 09.03.2020թ. V02.4/[20952]-20 գրության հիման վրա, 11.03.2020թ.-ին «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.03.2020թ.-ին:

12.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/74 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

19.03.2020թ.-ին և 10.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.04.2020թ.-ին:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 09.03.2020թ. V02.4/[20952]-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2020 թվականի փետրվարի 17-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ են ներկայացրել նաև «Տեպլոտեխնիկա» ՍՊ, «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերությունները և անհատ ձեռներեց Արա Կարապետյանը: Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 2-ի 5-րդ նիստի 3-րդ որոշմամբ, ի թիվս մի շարք այլ մասնակիցների, «Տեպլոտեխնիկա» ՍՊ, «Փրիթի Ուեյ» ՍՊ

ընկերություններին և անհատ ձեռներեց Արա Կարապետյանին ևս առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հայտով ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկում՝ հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին մարտի 3-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Տեպլոտեխնիկա» ՍՊ ընկերության 49-րդ, 50-րդ, 51-րդ և «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերության 49-րդ, 50-րդ, 51-րդ, 63-րդ չափաբաժինների շտկված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ անհատ ձեռներեց Արա Կարապետյանն առհասարակ չի շտկել անհամապատասխանությունները և չի ներկայացրել ոչ մի փաստաթուղթ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 6-ի 6-րդ նիստի 2-րդ որոշմամբ «Տեպլոտեխնիկա» ՍՊ ընկերության 49-րդ, 50-րդ, 51-րդ, «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերության 49-րդ, 50-րդ, 51-րդ, 63-րդ չափաբաժինները և անհատ ձեռներեց Արա Կարապետյանի հայտը մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Տեպլոտեխնիկա» ՍՊ, «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերությունների և անհատ ձեռներեց Արա Կարապետյանի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի խնդրահարույց 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 63-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքը /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am կայքում/, ընթացակարգի մասնակիցներ «Տեպլոտեխնիկա» ՍՊ, «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերությունների և անհատ ձեռներեց Արա Կարապետյանի կողմից ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու հայտերը և «Տեպլոտեխնիկա» ՍՊ, «Փրիթի Ուեյ» ՍՊ ընկերությունների շտկված տեխնիկական բնութագիրը, ընթացակարգի արձանագրությունների պատճենները:»:

3. <u>«Արա Կարապետյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3727-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 19.03.2020թ.-ին հրավիրված նիստին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը բանավոր կերպով հայտնել է, որ չի կարողացել գտնել ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին համապատասխանող օդորակիչ, քանի որ այդպիսի պարամետրերով օդորակիչ գոյություն չունի:

4. <u>ՍՑ-LO-2020/74 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով 17.02.2020թ-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 52-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«No Inverter 30000BTU, սպլիտ տեսակի օդակարգավորիչ, թվային էկրանով, սառեցում՝ արտադրողականություն նվազագույնը 6300W, և ջեռուցում՝ արտադրողականություն նվազագույնը 7100W, նոմինալ հզորություն (սառեցում/ջեռուցում)՝ 2.720/2.490, գազի տեսակը՝R410A, էներգախնայողության դասը՝ A, թևիկների (ժալյուզ) աջ և ձախ հեռակառավարվող համակարգ (4D AIR), օդի շրջանառությունը՝ նվազագույնը 1200խմ/ժ, SMART ռեժիմ-նվազագույն էներգիայի ծախսով, սենյակում 22-26 աստիճանի պահպանման ավտոմատ համակարգ, ջերմաստիճանի սենսոր տեղակայված հեռակառավարման վահանակում, որն ապահովում է նշված ջերմաստիճանի ապահովումը մարդու գտնվելու վայրում (iFeel համակարգ), AC220V, 0-60Hz, ձայնի*

աստիճանը առավելագույնը մինչև 45db (ձայնամեկուսացված կոմպրեսոր), աշխատանքային ջերմաստիճանը +43C/-15C, ածխային ֆիլտր, օդը թարմացնելու հնարավորությամբ: Խողովակներ 5 մետր, տեղադրումը ավտոքարշակով Վաճառողի հաշվին և Վաճառողի միջոցներով: 2019 կամ 2020 թվականի արտադրության: Երաշխիքը 2 տարի:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արա Կարապետյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 52-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
52	օդորակիչ	BERG	BERG	Gree Electric Appliances Inc	No Inverter 30000BTU, սպլիտ տեսակի օդակարգավորիչ, թվային էկրանով, սառեցում՝ արտադրողականություն նվազագույնը 6300W, և ջեռուցում՝ արտադրողականություն նվազագույնը 7100W, նոմինալ հզորություն (սառեցում/ջեռուցում)՝ 2,8/2.6, գազի տեսակը՝R410A, էներգախնայողության դասը՝ A+, օդի շրջանառությունը՝ նվազագույնը 1020խմ/ժ, AC220V, 0-60Hz, ձայնի աստիճանը առավելագույնը մինչև 45db (ձայնամեկուսացված կոմպրեսոր), աշխատանքային ջերմաստիճանը +43C/-15C, ածխային ֆիլտր, օդը թարմացնելու հնարավորությամբ: Խողովակներ 5 մետր, տեղադրումը ավտոքարշակով Վաճառողի հաշվին և Վաճառողի միջոցներով: 2019 կամ 2020 թվականի արտադրության: Երաշխիքը 2 տարի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.03.2020թ.-ի թիվ 5 արձանագրության 3.8 կետի համաձայն՝ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն հավելված 1.1-ում 52-րդ չափաբաժնում նոմինալ հզորությունը ներկայացված է 2,8/2,6 2,7/2,5-ի փոխարեն, օդի շրջանառությունը 1020խմ/ժ 1200 փոխարեն, անհրաժեշտ է ավելացնել նշումն այն մասին, որ առկա է SMART ռեժիմ-նվազազույն էներգիայի ծախսով, սենյակում

22-26 աստիճանի պահպանման ավտոմատ համակարգ, անհրաժեշտ է հստակեցնել արտադրության տարեթիվը, անհրաժեշտ է ավելացնել մակնիշը:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.9-րդ կետի պահանջները, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 06.03.2020թ.-ի թիվ 6 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Արա Կարապետյան» ՍՊ ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3727-2020 գրությամբ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը

մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն հրավերի 2-րդ մասի 2.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 1.1-ի:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ

հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով 17.02.2020թ-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 52-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«No Inverter 30000BTU, սպլիտ տեսակի օդակարգավորիչ, թվային էկրանով, սառեցում՝ արտադրողականություն նվազագույնը 6300W, և ջեռուցում՝ արտադրողականություն նվազագույնը 7100W, նոմինալ հզորություն (սառեցում/ջեռուցում)՝ 2.720/2.490, գազի տեսակը՝R410A, էներգախնայողության դասը՝ A, թևիկների (ժալյուզ) աջ և ձախ հեռակառավարվող համակարգ (4D AIR), օդի շրջանառությունը՝ նվազագույնը 1200խմ/ժ, SMART ռեժիմ-նվազագույն էներգիայի ծախսով, սենյակում 22-26 աստիճանի պահպանման ավտոմատ համակարգ, ջերմաստիճանի սենսոր տեղակայված հեռակառավարման վահանակում, որն ապահովում է նշված ջերմաստիճանի ապահովումը մարդու գտնվելու վայրում (iFeel համակարգ), AC220V, 0-60Hz, ձայնի աստիճանը առավելագույնը մինչև 45db (ձայնամեկուսացված կոմպրեսոր), աշխատանքային ջերմաստիճանը +43C/-15C, ածխային ֆիլտր, օդը թարմացնելու հնարավորությամբ: Խողովակներ 5 մետր, տեղադրումը ավտոքարշակով Վաճառողի հաշվին և Վաճառողի միջոցներով: 2019 կամ 2020 թվականի արտադրության: Երաշխիքը 2 տարի:»:*

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արա Կարապետյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 52-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

52	օդորակիչ	BERG	BERG	Gree Electric Appliances Inc	No Inverter 30000BTU, սպլիտ տեսակի օդակարգավորիչ, թվային էկրանով, սառեցում՝ արտադրողականություն նվազագույնը 6300W, և ջեռուցում՝ արտադրողականություն նվազագույնը 7100W, նոմինալ հզորություն (սառեցում/ջեռուցում)՝ 2,8/2.6, գազի տեսակը՝R410A, էներգախնայողության դասը՝ A+, օդի շրջանառությունը՝ նվազագույնը 1020խմ/ժ, AC220V, 0-60Hz, ձայնի աստիճանը առավելագույնը մինչև 45db (ձայնամեկուսացված կոմպրեսոր), աշխատանքային ջերմաստիճանը +43C/-15C, ածխային ֆիլտր, օդը թարմացնելու հնարավորությամբ: Խողովակներ 5 մետր, տեղադրումը ավտոքարշակով Վաճառողի հաշվին և Վաճառողի միջոցներով: 2019 կամ 2020 թվականի արտադրության: Երաշխիքը 2 տարի:

Հանձնաժողովի 02.03.2020թ.-ի թիվ 5 արձանագրության 3.8 կետի համաձայն՝ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն հավելված 1.1-ում 52-րդ չափաբաժնում նոմինալ հզորությունը ներկայացված է 2,8/2,6 2,7/2,5-ի փոխարեն, օդի շրջանառությունը 1020խմ/ժ 1200 փոխարեն, անհրաժեշտ է ավելացնել նշումն այն մասին, որ առկա է SMART ռեժիմ-նվազազույն էներգիայի ծախսով, սենյակում 22-26 աստիճանի պահպանման ավտոմատ համակարգ, անհրաժեշտ է հստակեցնել արտադրության տարեթիվը, անհրաժեշտ է ավելացնել մակնիշը:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.9-րդ կետի պահանջները, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 06.03.2020թ.-ի թիվ 6 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Արա Կարապետյան» ՍՊ ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց

հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունների շտկումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3727-2020 գրությամբ «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/74 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արա Կարապետյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ